

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

25 դեկտեմբերի 2008 թ.

N 200-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 02/1508 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի 70 հոդվածի, 96 հոդվածի 2-րդ կետի և 117 հոդվածի պահանջներն ապահովելու մասին» N 02/1508 հրամանի 1-ին կետի ա) ենթակետը, 1-ին կետի ա) ենթակետով հաստատված կարգը, 3-րդ և 5-րդ կետերը:
3. Սահմանել, որ մինչ սույն հրամանի ուժի մեջ մտնելը տրված մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայականները մնում են ուժի մեջ, մինչև դրանցում նշված ժամկետների ավարտը:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագահ՝

Գ. Խաչատրյան

Հավելված
ՀՀ կառավարության արքնթեր
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2008 թ. դեկտեմբերի 25-ի
N 200-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՄԱՔՍԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման քննությունների (այսուհետ՝ քննություն) անցկացման հետ կապված հարցերը:

2. Մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում տալու համար յուրաքանչյուր ամիս վերադաս մաքսային մարմինը կազմակերպում է քննություն, իսկ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ կազմակերպվում են մաքսային բնագավառը կարգավորող իրավական ակտերի և մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգչային ծրագրի ուսուցման երկշաբաթյա դասընթացներ (այսուհետ՝ դասընթաց):

(2-րդ կետը խմբ. 27.03.12 N 83- Ն, փոփ. 29.08.12 N 265- Ն)

3. Դասընթացը կազմակերպվում է անվճար, որին մասնակցում են կամավոր հիմունքներով:

4. Քննությունն անցկացնում է վերադաս մաքսային մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

(4-րդ կետը խմբ. 27.03.12 N 83- Ն)

5. Քննության անցկացման օրվա, ժամի և վայրի, նախատեսված հարցաշարի, քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության պաշտոնական կայք-էջում՝ քննությունից առնվազն տասը օր առաջ, իսկ դասընթացի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ դասընթացից առնվազն մեկ ամիս առաջ:

(5-րդ կետը խմբ. 27.03.12 N 83- Ն)

6. Քննությանը կարող են մասնակցել տասնութ տարին լրացած, միջնակարգ կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

(6-րդ կետը փոփ. 27.03.12 N 83- Ն)

7. Քննությանը մասնակցելու համար դիմորդները քննությունից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ վերադաս մաքսային մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ վերադաս մաքսային մարմնի ղեկավարի անունով.

2) անձնագրի, միջնակարգ կրթության, առկայության դեպքում՝ նաև բարձրագույն կրթության և (կամ) մասնագիտական վերապատրաստման վկայականի պատճենները:

8. Քննությունն անցկացվում է թեստավորման եղանակով:

9. Թեստավորումն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում (սրահ, լսարան, դահլիճ և այլն):

10. Մասնակիցը թեստավորմանը մասնակցելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից մեկն ստուգում է մասնակցի ինքնությունը և թույլատրում նրան մտնել թեստավորման անցկացման համար առանձնացված սենյակը, որտեղ մասնակիցը կարող է զբաղեցնել ցանկացած ազատ նստարան: Մասնակիցների մուտքը սենյակ դադարեցվում է թեստավորումն սկսելու համար նախատեսված ժամանակից տասը րոպե առաջ:

11. Թեստավորման մասնակիցներն իրենց հետ թեստավորման սենյակ չեն բերում տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր, կապի միջոցներ կամ այլ տեխնիկական սարքեր:

12. Թեստը կազմում է հանձնաժողովը՝ մաքսային բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և մաքսային հայտարարագրման ավտոմատ համակարգչային ծրագրից օգտվելու իմացությունը ստուգող հարցերի հիման վրա կազմված հարցաշարից համակարգչի միջոցով պատահականորեն ընտրված քսան հարցերից:

(12-րդ կետը լրաց 27.03.12 N 83-Ն)

13. Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներից մեկը մասնակիցներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը: Նա պատասխանում է մասնակիցների բոլոր հարցերին, որպեսզի հավաստիանա, որ բոլոր մասնակիցները հասկացել են առաջադրանքի էությունը:

14. Յուրաքանչյուր հարց ունի երեք կամ չորս ենթադրյալ պատասխան, որոնցից մեկը ճիշտ պատասխանն է:

15. Թեստավորման սկիզբը հայտարարվելուց հետո մասնակիցը ծանոթանում է առաջադրանքներին և յուրաքանչյուր հարցի ենթադրյալ պատասխաններից ընտրում է մեկ (իր կարծիքով՝ ճիշտ) պատասխանը:

16. Թեստի հարցերին պատասխանելու համար տրվում է քառասուն րոպե ժամանակ:

17. Թեստավորման ընթացքում մասնակիցները դուրս չեն գալիս սենյակից: Եթե մասնակիցը ցանկանում է լքել սենյակը, ապա նրա աշխատանքը համարվում է դադարեցված:

18. Աշխատանքի ավարտից, ինչպես նաև թեստավորման առաջադրանքների կատարման համար հատկացված ժամանակն սպառվելուց հետո մասնակիցը թեստավորման թերթիկի վրա լրացնում է իր անունը, ազգանունը, հայրանունը, հանձնում այն հանձնաժողովի նախագահին և դուրս գալիս սենյակից:

19. Թեստավորման արդյունքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ սխալը՝ զրո: Միավ պատասխաններ են համարվում ոչ ճիշտ պատասխանը նշելը, մեկից ավելի պատասխաններ նշելը, որևէ պատասխան չնշելը:

20. Թեստավորման թերթիկի վրա ջնջումներ կամ ուղղումներ չեն կատարվում: Այդ դեպքում տվյալ հարցի (թեստի) պատասխանը համարվում է սխալ պատասխան:

21. Թեստի ստուգման աշխատանքների ավարտից հետո բոլոր մասնակիցները հրավիրվում են թեստավորման սենյակ, որտեղ բոլորի ներկայությամբ հանձնաժողովի նախագահի կողմից հրապարակվում են թեստավորման արդյունքները:

22. Թեստավորման արդյունքը դրական է համարվում առաջադրված թեստի հարցերի առնվազն իննսուն տոկոսին ճիշտ պատասխանելու դեպքում:

23. Թեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել հանձնաժողովին՝ դրանց հրապարակումից հետո՝ մեկ ժամվա ընթացքում: Բողոքարկման արդյունքներն ամփոփվում են նույն օրը:

(23-րդ կետը լրաց 02.09.13 N 376-Ն)

24. Եթե հանձնաժողովը որոշում է բավարարել մասնակցի բողոքը և սխալ կամ թերի է համարում թեստում ներառված որևէ հարց (հարցեր), ապա այդ որոշման հիման վրա տվյալ հարցի (հարցերի) համար զրո միավոր ստացած բոլոր մասնակիցների միավորներն ավելացվում են համապատասխան միավորով (միավորներով):

Եթե պարզվում է, որ թեստավորման արդյունքների հաշվարկման ժամանակ սխալ է թույլ տրվել, ապա հանձնաժողովը բավարարում է մասնակցի պահանջը՝ կատարելով թեստավորման արդյունքների ճիշտ հաշվարկ:

25. Բողոքարկման արդյունքների ամփոփումից հետո, ինչպես նաև բողոք չլինելու դեպքում հանձնաժողովը նույն օրն ընդունում է որոշում և երկու աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարի հաստատմանն է ներկայացնում քննությունը դրական հանձնած անձանց ցանկը: Ցանկը հրապարակվում է մաքսային ծառայության պաշտոնական կայքէջում ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատվելուց հետո երկօրյա ժամկետում:

(25-րդ կետը խմբ. 02.09.13 N 376-Ն, փոփ. 16.06.14 թիվ 368-Ն)

26. Մաքսային ծառայության պաշտոնական կայքէջում ցանկի հրապարակումից մեկ աշխատանքային օր անց քննության արդյունքում մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորում ստացած անձինք ՀՀ ֆինանսների նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքների ներդրման և զարգացման վարչությունից կարող են ստանալ ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված ձևի մաքսային ձևակերպումների մասնագետի որակավորման վկայական:

(26-րդ կետը խմբ. 02.09.13 N 376-Ն, փոփ. 16.06.14 թիվ 368-Ն)

(հավելվածը խմբ., փոփ., լրաց 27.03.12 N 83-Ն, փոփ. 29.08.12 N 265-Ն, լրաց, խմբ. 02.09.13 N 376-Ն, փոփ. 16.06.14 թիվ 368-Ն)